

later, at the end of the XVIII century. The term ‘Law Philosophy’ especially extended connected with Hegel’s ‘Philosophy of Law’, the significance and contemporaneity of which have been preserved up to these days.

ՎԻԺԵԼՈՒ ԵՎ ՆՈՐԱԾՆԻ ՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱՅՐՅԻ ԸՆՏ «ՀԱՅԱԽԱՊԱՏՈՒՄ ԲԱՌՔԻ»

Ս. Ա. ԽԱՉԱՏՐՅԱՆ

Իրավաբանական գիտությունների թեկնածու,
գոցենս,

ԳՊՀ դասախոս

«Հաճախապատում ճառքի» մեջ տեղ գտած բազմաթիվ այլ նորմերի կողքին, «Ը» ճառի 25 տաճն առկա է հետաքրքիր կառուցվածք ունեցող հանցակազն պարունակող նորմ: Այն ունի հետևյալ տեսքը. «Կեսք յորովայնի ճնշեն եւ տարածամ անցուցանեն զնանկունս, եւ կամ դեղովք ապականեն յորովայնի. եւ է որ գծնեալսն սպանանեն»¹: Առաջին հայացքից թվում է, թե այն կրոնական քարոզչի կողմից պատահականորեն արված բարոյախոսական դիտողություն է: Իրականում այն զրադաշտական իրավական նորմ է, ինչպես այնտեղ իրենց արտացոլումը գտած շատ այլ նորմեր ու նորմատիվ գաղափարներ, իսկ «Հաճախապատում ճառքն» էլ իրենից ներկայացնում է իրավաբանական տրակտատ, որն ունի բացարիկ գիտական և պատմական նշանակություն: Այն զրադաշտական իրավունքի ճանաչման աղբյուր է, որում առկա են զրադաշտականից ռեցեպցիայի ենթարկված և քրիստոնեացված բազմաթիվ նորմեր, և, փաստորեն, այն նոր քրիստոնեական պետության, եկեղեցու ու դրա օրենսդրության ստեղծման գաղափարաբանական հիմքն ու հիմնավորումն է:

Աշխարհում առաջինը Սպիտակ Սպիտամա Զորոաստրն է (Զրադաշտ), որը պյանավորված կերպով ստեղծել է իրավական, կրոնական, բարոյական, քաղաքական, տնտեսական և էքտետիկական գաղափարական-կարգավորիչ նորմատիվ սիստեմներ (հանակարգեր), քարոզել, տարածել դրանց գաղափարները, նորմերն ու հավատալիքները: Նա հենց ինքն էլ դրանց հիմնան վրա ծրագրված կերպով ստեղծել է պետություն՝ իրանական-արիական ֆեղերացիան, որի կազմավորող հիմքերից մեզը և սուրբեկտը Հայաստանն էր: Այն միակ պետությունաշխարհակալությունն էր, որն ավելի կենսունակ էր, քան Հռոմեական պետությունը, և ոչ միայն կարողացավ հաջողությամբ դիմակայել նրան, այլև դաշնալ նրա քայրայնան վկան:

Իսկ նրա կենսունակության պատճառն այն է, որ զրադաշտական պետականության և քաղաքակրթության հիմքը՝ Զորոաստրի ուսմունքը, գաղափարախո-

¹ Տե՛ս Հաճախապատում ճառք // Մատենագիրք հայոց, Ա հատոր, Անթիլիաս-Լիբանան, 2003, էջ 46:

սությունը, նրա ստեղծած իրավական և այլ սիստեմները շատ ավելի կենսունակ էին, քան հին հունականն ու հռոմեականը: Դրանք և դրանց հիման վրա ծագած քաղաքակրթությունը, ինչպես նկատել է Գ. Վ. Ֆեգելը, մի աստիճան էին և շատ կարևոր՝ բռնությունից դեպի ազատությունն ընկած ճանապարհիմ²: Միայն այդ ուսմունքի ու դրա վրա հիմնված պետության և իրավունքի ստեղծած իրադրության պայմաններում էր հնարավոր անցումը քրիստոնեական պետության ու իրավունքին, և ոչ թե հռոմեական, որն էլ ապահովեց Գր. Լուսավորիչը: Հռոմեական պետությունը և իրավունքը, հատկապես՝ ոչ հռոմեացի-լատինացիների նկատմամբ՝ տոտալ բռնության իրավունք էր և դրա պայմաններում քրիստոնեական հեղափոխությունն անհնար էր:

Գր. Լուսավորիչը Զորոաստրից հետո պատմության մեջ երկրորդ տեսաբան քարոզիչն է, որը որոշակի ուսմունքի հիման վրա, ծրագրավորված կերպով ստեղծել է իրավական և այլ սիստեմներ, քրիստոնեական պետական օրենսդրություն՝ դրա համար որպես հիմք և ատաղձ օգտագործելով գրադաշտականը: «Յաճախապատում ճառքը» գրադաշտական իրավական, բարոյական, կրոնական, էսթետիկական, քաղաքական, տնտեսական նորմերի ու գաղափարների ռեցեպցիայի հուշարձան է, նոր պետության, Եկեղեցու կառուցման տեսականգաղափարախոսական հիմք, իսկ գրադաշտական նորմերի առկայությունն այնտեղ պատահականություն չէ, այլ օրինաչափություն: Գր. Լուսավորիչը համարձակորեն փոխառել է դրանք: Կարելի է նույնիսկ անդել, որ նա փոխառել է քրիստոնեականը, աստվածաշնչյանը և ներդրել հայկական ազգային-գրադաշտական իրավունքի և այլ նորմատիվ համակարգերի մեջ: Դրանց դիֆուզիան ոչ միայն հնարավոր էր, այլ նաև անհրաժեշտ: Առանց դրա ազգայինի և վերազգայինի կապն ապահովել հնարավոր չէր, իսկ առանց այդ կապի ապահովման քրիստոնեական պետություն և օրենսդրություն ստեղծել նույնպես հնարավոր չէր: Զրադաշտական նորմերն էլ ընդամենը հայկական էին, ազգային և ոչ թե պարսկական կամ մեկ այլ ազգի պատկանող: Դրանց դիֆուզիայով և համատեղումով հայկական իրավունքում գուգակցվել է ազգայինն ու վերազգայինը, ինտերնացիոնալը: Առանց դրա, առանց հայկական գրադաշտական և հայկական քրիստոնեական իրավունքի ժառանգական իրավահաջորդական (պրեսմետենոս) կապն ու շարունակականությունը ապահովելու՝ նոր քրիստոնեական պետություն, պետության մեջ և նրա կողմից օգտագործելուն պիտանի և կենսունակ իրավական և այլ սիստեմներ ստեղծել՝ անհնար էր:

Նորագույն ժամանակների քրիստոնեական իրավունքում պտուղը կրողի կողմից վիմելու համար՝ ինչպես ինքնաբերաբար տեղի ունեցած կամ անզգուշորեն կատարված, այնպես էլ դիտավորյալ՝ որևէ արգելք չկա: Ընդ որում, ժամանակակից քրեական օրենքով արորտ անելու որոշակի տեսակ, այն էլ՝ ոչ թե պտուղը կրողի կողմից կատարված, այլ մեկ ուրիշի՝ կարող է դիտվել հանցագործություն, իսկ որոշակի տեսակ էլ չփիտվել այդպիսին: Յիմնականում պատասխանատվություն է նախատեսվում առողջապահական նորմերի խախտմանը կատարված արհեստական վիժումի (աբորտ, լատիներեն՝ *Abortus*) համար՝ այն էլ ոչ թե վիժող կնոջ, այլ բժշկի կամ բժշկական կրթություն չունեցող

²Տե՛ս Գ. Վ. Փ. Գեգել. Փիլոսոփիա րելիգիոն. Բ 2-ի տոմախ. Մ., «Մատուցում», 1977, էջ 5-15:

անձի կողմից դա «անհաջող» կատարելու համար (ՀՅ քր. օր.-ի 122 հ., ՈՂ քր. օր.-ի 123 հ.), որի ժամանակ վճար է պատճառվում պտուղը կրողի առողջությանը կամ կյանքին: Բացի դրանից, պետք է նաև նշել, որ դիտավորյալ կերպով վիժում (արհեստական վիժում) կամ հղիության ընդհատում առաջացնելը, որպես հակարավական կամ հակարարոյական արարք, և նորածին կամ ոչ նորածին երեխայի սպանությունը՝ կատարված երեխայի մոր կամ մեկ այլ անձի կողմից, ժամանակակից քրեական օրենսգրքերում և քրեական իրավունքի գիտության մեջ դիտվում են տարբեր արարքներ և իրավացիորեն նախատեսված են տարբեր նորմերում: Այդ արարքները իրարից տարբերվում են իրենց սուբյեկտով, օրյեկտով, դիտավորության ուղղությամբ և օբյեկտիվ կողմով:

Այս նորմը «Ը» ճարի 25 տանը ծևակերպելիս՝ Գր. Լուսավորիչն ուղղակիորեն նկատի է ունեցել ոչ թե օրինական ամուսնության հետևանքով առաջացած հիդությունը դիտավորյալ կերպով ընդհատելը, այլ պոռնկության կամ շնության հետևանքով հղիանալը և դրանց հետևանքով առաջացած սաղմը, պտուղը կամ ծնված երեխային դիտավորությամբ ոչնչացնելը՝ պտուղը կրողի կողմից: Բայց երբ ուսումնասիրվում են այդ նորմի ծագման հիմքերը, ապա պարզ է դառնում, որ նրա կողմից դատապարտվում է նաև օրինական ամուսնության հետևանքով գոյացած պտուղը արհեստական ճանապարհով ոչնչացնելն ու արդեն ծնված երեխային դիտավորյալ կերպով սպանելը:

Նշված տաճ բովանդակությունից ակնհայտ է դառնում նաև, որ այնտեղ խոսքը նույն նորմով նախատեսված դիտավորությամբ կատարվող երեք արարքների մասին է. ա/ որովայն ճմլելու եղանակով մանուկներին ժամանակից շուտ «անցուցանելու», այն է՝ վիժում առաջացնելու, թ/ դեղեր ընդունելու եղանակով երեխային «ապականելու» միջոցով արգանդում ոչնչացնելու և վիժում առաջացնելու, զ/ կենդանի ծնված երեխային սպանելու մասին:

Նախ՝ վիժելու մասին: Դրա հասկացությունը քրեական իրավունքի դասագրքերում, այդ թվում՝ հայերեն լեզվով հրատարակված, բացահայտված չէ³: Ըստ «Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարանի» «վիժել» կամ «վիժում» նշանակում է «Բնական ժամանակից առաջ՝ վաղաժամ ընդհատել հղիությունը և արգանդից դուրս մղել պտուղը»⁴: Ըստ Ս. Մալխասեանցի «Հայերեն բացատրական բառարանի»՝ «վիժումը» դա «Գոյական սաղմի անբնական արտաքսումն է», «Բնական ժամանակից առաջ արգանդից սաղմի դուր մղումը: Երեխա ծնել (կենդանի կամ մեռած): «Վիժուկը» կամ «վիժվածքն» էլ «անժամանակ ծնված երեխան է»⁵: Ըստ Է. Աղայանի «Արդի հայերենի բացատրական բառարանի»՝ վիժել նշանակում է «Վաղաժամ արգանդից դուրս մղել պտուղը, փչացնել»: Իսկ «վիժվածքը» կամ «վիժուկը» «Արտավիժած նյութն է, պտուղը, սաղմը»⁶:

Այսպիսով, վիժելը ժամանակից շուտ և ինքնաբերաբար հղիության ընդհա-

³Տե՛ս ՀՅ քրեական իրավունք, Հատուկ մաս, Դասագիրք, Երևան, ԵՊՀ իրատ., 2009, էջ 111-117, 172-174:

⁴Տե՛ս ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան, Հ. 4, Երևան, ՀՅ ԳԱ իրատ, 1980, էջ 412:

⁵Տե՛ս Մալխասեանց Ս., Հայերեն բացատրական բառարան, Երևան, 1946, Հ. 4, էջ 340:

⁶Տե՛ս Աղայան Է., Արդի հայերենի բացատրական բառարան, Երևան, 1976, Հ. 2, էջ 1390:

տումը և անկենսունակ կամ կենսունակ սաղմից, պտղից անզգուշությամբ կամ դիտավորությամբ ազատվելն է, անկենսունակ դարձած կամ դարձրած սաղմի կամ պտղի դուրս նետումը: Եվ ինչպես պարզ է, այն կատարվում է ոչ միայն ինքնարերաբար, բնականորեն, կնոջ վատառողջության, ստրեսի, պտղի անկենսունակության հետևանքով կամ էլ պտուղը կրողի, կամ էլ որևէ մեկ ուրիշի անզգուշության հետևանքով, այլ նաև արհեստականորեն, դիտավորությամբ, և այն էլ՝ ուղղակի դիտավորությամբ:

Նորածնի սպանությունն էլ, ժամանակակից քրեական իրավունքի տեսակետից, բարդ անբարենպաստ իրադրության մեջ կամ հոգեկան խանգարման վիճակում գտնվող մոր կողմից ծննդաբերության ժամանակ կամ անմիջապես դրանից հետո նորածն երեխային կյանքից գրկելն է (ՀՀ քր.-ի 106 հ.): Բայց անշուշտ, մանկասպանությունը, որի մասին խոսք է գնում Գր. Լուսավորչի այդ ճառում, ունի ավելի ընդգրկուն բովանդակություն, և այս նորմի ձևակերպումից գուշակել կամ բացահայտել այնտեղ նախատեսված արարքի բոլոր հնարավոր դրսւորումները և նրբությունները՝ հնարավոր չեն: Փաստ է միայն, որ նշված արարքները՝ աբորտը և նորածնի սպանությունը, միասին վերցրած նախատեսված են «Հաճախապատում ճառքի» մեկ տաճը, մեկ նորմում և համարժեք ու համաշանակալից հանցագործություններ են դիտվում:

Առաջին հայացքից կարող է տարօրինակ թվալ, թե ինչու է երրորդ վարքագծի տեսակը՝ նորածնին սպանելը, նախատեսված այս կամ այն եղանակով կատարվող արհեստական վիժնան կամ արորտի հետ: Թվում է, թե դրանք առանձին հանցակազմեր են, և պետք է նախատեսված լինեին առանձին նորմերով, և դրանք մեկ նորմով նախատեսելն ու իրար հավասարեցնելը պատահական է: Բայց դա այդպես չէ, և դրանք իրար հետ հիշատակելու (նախատեսելու) փաստն արդեն իսկ վկայում է այն մասին, որ դիտավորյալ աբորտն ու մանկասպանությունը Գր. Լուսավորիչը դիտել է նույն հանցակազմի իրականացման տարբեր եղանակներ: Այստեղից էլ հարց է ծագում, թե ինչո՞ւ: Եվ արդյո՞ք նա ինքն է մտահղացել և ձևակերպել այս նորմը, ի՞նքն է որոշել դատապարտել վարքագծի այդ տեսակները նոր քրիստոնեական հավատի, բարոյականության ու իրավունքի դիրքերից, թե դրանք աստվածաշնչյան են և վերցված են այնտեղից: Եվ արդյո՞ք նանկասպանության նորմը պատահականորեն է հայտնվել աբորտին կամ արհեստական վիժնանը նվիրված նորմի կազմում և չիմացության հետևանք է, հետևաբար՝ Գ. Լուսավորիչը էլ չիմացող է:

Միանգամից պետք է ասել, որ այստեղ որևէ չիմացության հարց չկա: «Ը» ճառի 25 տաճը ձևակերպվածը մեկ միասնական նորմ է: Դրանում նախատեսված են նույն արարքի հասարակ և որակյալ տեսակներ և այն իր ծագումով գրադաշտական է: Բայց դա հիմնավորելու, ճշմարտությունը բացահայտելու համար անհրաժեշտ է կատարել այդ նորմի մեջ նախատեսված հանցակազմի կառուցվածքային մասերի՝ օբյեկտի, սուբյեկտի, սուբյեկտիվ, օբյեկտիվ կողմերի վերլուծություն և որոշ համեմատություններ:

1. Նախ՝ այն օբյեկտի մասին, որոնց դեմ ուղղված են որովայն ճմլելու կամ դեղեր ընդունելու եղանակներով «մանուկներին» ժամանակակից շուտ «անցուցանելու» կամ արհեստականորեն վիժելու գործողությունները: Միանշանակ կարելի է ասել, որ նման եղանակներով կատարվող արարքի օբյեկտը մոր արգանդում

առաջացած սաղմն է (որի մասին Գ. Լուսավորչի ձևակերպած այս նորմում որևէ հիշատակում չկա, բայց այն ենթադրվում է), այնուհետև՝ նաև պտուղը, որը այդ տաճք կոչվում է «մանուկ»: Այդ «մանուկը» կամ պտուղը, հետո՝ նաև ծնված երեխան, տվյալ դեպքում նույնացվել և դիտվում են որպես ոտնձգության մեկ կամ հավասարաթեք օբյեկտ, և նաև մոտեցումը պատահականության կամ չինացության հետևանք չէ: Դա նշանակում է, որ կոնզ հիշանալու պահից կամ դրանից որոշ ժամանակ անցնելուց հետո, որի չափի մասին խոսք կլինի հետո, եթե սաղմն հասած է լինում զարգացման ինչ-որ աստիճանի, նրա կողմից սկսում է դիտվել որպես ապրող և հոգի ունեցող մարդ, ինչպես ծնված երեխան:

Այն, որ մոր արգանդում գտնվող պտուղը Գր. Լուսավորչի կողմից համարվել է ապրող և հոգի ունեցող մարդ՝ «մանուկ», հիմնավորվում է ինչպես վերոնշված «Ը» ճառի 25, այնպես էլ «Բ» ճառի 40 («Որպես տղայք յորովայնի մարցն ոչ գիտեն յորպիսի հասակս փոփոխելոց են...»), «ԺԵ» 37 («Են ոմանք որ ասեն՝ եթե որպես մանուկն յորովայնի անզգայ եւ կենդանի լոեալ եւ դադարեալ կայ ի խաւսելոյ եւ ի լսելոյ, ի գնալոյ եւ ի գործելոյ...»), «ԺԸ» ճառի 11 («Որպես առ մանկունն իսահակա, մինչդեռ յորովայնի մաւրն էին, ընտրութիւնս առնե. զՅակոր սիրէ, որ բարի բացայատի, եւ զեսաւ ատեայ, որ չար երեւիլր...»), «Ի» ճառի 22 (Զի որպես մանկունք որ յորովայնի մարցն լինին յապաժոյժ, եւ ի խաւարի թաղեալ...) և այլ տներով: Ինչպես տեսնում ենք, մոր արգանդում գտնվող պտուղը համարվել է լիարժեք «մանուկ»: Դրա արդյունքում էլ այս եղանակներով՝ որովայն ճնշելու կամ դեղեր օգտագործելու միջոցով, արհեստականորեն վիճելու կամ արորտը Գր. Լուսավորչը դիտել է որպես արդեն ծնված երեխայի սպանության համարժեք, ծանրության տեսակետից դրան հավասար արարք, այն է՝ ուրիշի մարմնի ու հոգու կործանում: Այդ պատճառով էլ այս արարքները և նորածին երեխայի սպանությունը՝ որպես նույն օրյեկտի դեմ ուղղված, նախատեսված են իրար հետ, մեկ նորմում, նույն տաճք, թեև քրեական իրավունքի գիտության դիրքերից դրանք տարբեր արարքներ են և ենթադրում են տարբեր օրյեկտներ և նորմեր:

Այդ նույն վերաբերմունքը պտղին, որպես մանկան և ոտնձգության լիարժեք օբյեկտի, անցել է հայ միջնադարյան իրավունքին: Դավիթ Ալավկա Որդու Դատաստանագրքի 48 հոդվածում, որը կոչվում է «Մատնիչների, սպանողների, հրձիգների և կոնչ մասին, որը երեխային սպանում է փորի մեջ, այս է կանոնը», ասվում է. «Եթե ...կինը երեխան փորում դեղով կամ ճնշելով կամ պատից իրեն ցած զցելով սպանելիս լինի և մեկ ուրիշը՝ կանանցից թե տղամարդկանցից, մոտը կանգնած լինի և այս սպանողին գործակից լինի որպես համախոհ կամ խորհրդիներ տալով, մինչդեռ կարող էր կյանքից գրկվողին օգնել անձանք կամ ուրիշներին օգնության կանչել և անփուլք եղավ. այդպիսին մասնակից է կատարած սպանությանը: Նույնը վերաբերում է թե հրձիգի, թե երեխան սպանողի դեպքերին...»⁷: Ինչպես տեսնում ենք, այստեղ ակնհայտ է զուգահեռ այս և Գ. Լուսավորչի ձևակերպած նորմի վիճում նախատեսող մասի հետ: Պտուղը և երեխան դիտվել են հավասարաթեք օրյեկտներ: Միիրար Գոշի Դատաստանագրքի 62 հոդվածում էլ ասվում է. «Եթե երկու տղամարդ կրվեն և հարվածեն կոնջը

⁷Տե՛ս **Ավագյան Ռ.**, Յայ իրավական մտքի գանձարան, Երևան, 2001, էջ 218:

և կինը սաղմը վիժի՝ կնոջ ամուսնու պահանջածի կեսը վճարի խնդրելով, իսկ եթե ձևավորված (պտուղը- Ս. Խ.) լինի՝ անձի փոխարեն անձ...»⁸: Այստեղ, ինչպես տեսնում ենք, սաղմը և «ձևավորված պտուղը» տարբերակված են, իսկ արարքի սուրբեկտը ոչ թե պտուղը կրողն է, ինչպես որ է «Հաճախապատում ճառքում» կամ էլ Դավթի օրենսգրքում, այլ «Երկու տղամարդիկ», ինչպես Աստվածաշնչի «Ելք» գրքի 21 գլխի 22-23 տմբում:

Սմբատ Սպարապետի Դատաստանագրքի 107 հոդվածում էլ ձևակերպված է նշված նորմը, բայց դրանցից տարբերվող այլ էական փոփոխություններով: Դրանում արարքի սուրբեկտը ոչ թե երկու կրվող տղամարդիկ են, այլ «որևէ մեկը», այսինքն՝ ոչ թե միայն տղամարդը, այլ նաև կինը: Ընդ որում, հոդվածի բովանդակությունից ակնհայտ է դառնում, որ հղի կնոջը հարված է հասցվում ուղղակի դիտավորությամբ՝ նրան վիժեցնելու նպատակով, իսկ ոտնձգության օբյեկտը նույնն է՝ արդեն ձևավորված կամ էլ դեռևս չձևավորված, «կերպարանք չունեցող» երեխան: Այստեղ էլ, ինչպես տեսնում ենք, կնոյ արգանդի մեջ գտնվող սաղմը ինչ-որ պահից նույնպես դիտվում է արդեն իսկ ձևավորված մարդկային էակ, որի դիտավորյալ ոչնչացումը նորից հավասարեցվում է դիտավորյալ սպանությանը, որի համար որպես պատիժ կարող է նշանակվել մահապատիժ:

Ա. Թովմասյանը, նկատի ունենալով վերջին երկու օրենսգրքերի նշված հոդվածների բովանդակությունը, որոնք նրա մոտ նշանակված են 28 և 84 համարներով, մակերեսային դիտարկման հետևանքով հանգել է հետևողան, որ դա արվել է՝ «հետևելով մովսիսական օրենքներին»⁹: Դա ճիշտ տեսակետ չէ: Դավթի օրենսգրքի վերոնշված նորմը, որը նրա ուշադրությանը չի արժանացել ընդհանրապես, «Հաճախապատում ճառքի» Վերոնշված նորմի ուղղակի արտացոլում է: Դրա սուրբեկտը պտուղը կրող կինն է, որը գործում է դիտավորյալ կերպով՝ պտուղը ոչնչացնելու նպատակով: Ինչ վերաբերում է նրա ուշադրությանը արժանացած մյուս երկու աղքյուրների նորմերին, ապա դրանք աստվածաշնչյան կամ մովսիսական են այնքանով, որքանով դրանցում սուրբեկտը ոչ թե պտուղը կրողը, այլ ուրիշ սուրբեկտներ են՝ «Երկու իրար հետ կրվող տղամարդիկ» և «ամեն որ»: Բացի դրանից, Աստվածաշնչի «Ելք» գրքի 21 գլխի 22-23 տմբուց ակնհայտ է դառնում, որ դրանցում խոսքը կրվող տղամարդկանց կողմից հղի կնոջը «զարնուելու» մասին է, այսինքն՝ կրվով տարված լինելով կնոջը անգուշորեն խփելու, կպչելու և այդպիսով նրան վիժում պատճառելու մասին է: Այնտեղ ասված է. «Եթե երկու տղամարդիկ կրուելիս զարնուեն մի յղի կնոջ...»: Իսկ Գոշի ձևակերպած նորմում իրար հետ կրվող տղամարդիկ ոչ թե կրվով տարված և պատահաբար են դիպչում կնոջը, անգուշորեն «զարնվում» նրան, այլ նաև կրվելու ժամանակ հղի կնոջը ուղղակի «հարվածելու» մասին: Գոշի օրենսգրքի 62 հոդվածում ասված է. «Եթե երկու տղամարդ կրվեն և հարվածեն հղի կնոջը...»: Իսկ դա նշանակում է, որ կնոջը կարող էր հարված հասցվել և անգուշորեն, և դիտավորությամբ՝ նրա մոտ վիժում առաջացնելու նպատակով: Սմբատ Սպարապետի Դատաստանագրքի 107 հոդվածում արարքի սուրբեկտը հղի կնոջը ուղղակի դիտավորությամբ և նրան վիժեցնելու նպատակով հարվա-

⁸Տե՛ս **Միհիթար Գոշ**, Գիրք դատաստանի, Երևան, ՀՀ ԳԱ իրատ., 1975, էջ 58:

⁹Տե՛ս **Թովմասյան Ա. Թ.**: Յի՛ և միջնադարյան հայ քրեական իրավունք, 2 հատորից, 3. 2, Երևան, ԵՊՀ իրատ., 1977, էջ 171-172:

ծող «ամեն ոք» է, և այնտեղ անզգուշության մասին խոսք լինել չի կարող¹⁰: Բացի դրանից, ինչպես «Հաճախապատում ճառքում», այնպես էլ այս հայկական օրենսգրքերում, ոտնձգության օբյեկտը ոչ թե կնոջ առողջությունն է, այլ պտուղը: Աստվածաշնչի միայն 23 տան բովանդակությունից կարելի է ենթադրել, որ ոտնձգության օբյեկտ հանդիսացող պտուղը նույնպես դիտվել է ինքնուրույն կյանքով ապրող երեխա, քանզի այդ նույն տան մեջ ասված է. «կյանքի դեմ՝ կյանք...»:

Աստվածաշնչի «Ելք» գրքի 21 գլխի 22-23 տներում իսկապես ամրագրված է հանցակազմ, որում նախատեսված է կովկոյ տղամարդկանց կողմից կովկի վայրում հայտնված կնոջն հարվածելու և դրա հետևանքով նրա մոտ վիժում առաջացնելու հանցակազմը, որի ավելի թերև հանցատեսակը՝ նախատեսված 22 տանը, վերաբերում է սաղմը վիժելուն, իսկ 23 տունը՝ պտուղը վիժելուն: Այսայսպէս, աստվածաշնչյան այս նորմնում՝ նախատեսված տարբեր տներում, իրարից տարբերակվել են «սաղմ» և «պտուղ» երևույթները: Դրանցից սաղմը համարվում է պտղի զարգացման ավելի վաղ, «պտղի չձևավորված» փուլ և այն փշացնելու համար ավելի մեղմ պատիժ է սահմանվում, քան պտղի փշացման: «Հաճախապատում ճառքի» մեջ դրանք ուղղակիորեն իրարից տարբերակված չեն, ինչպես որ է հայկական միջնադարյան օրենսգրքերում և Աստվածաշնչում, և կարելի է կարծել, որ դրանք հայկական օրենսգրքերին են անցել Աստվածաշնչից, բայց դա այդպես չէ կամ դա անբողջ ծշմարտությունը չէ:

«Հաճախապատում ճառքում» և նշված միջնադարյան իրավունքի հուշարձաններում պատկերացումները պտղի մասին՝ որպես երեխայի և որպես ոտնձգության օբյեկտի, զրադաշտական են, և զրադաշտական իրավունքից էլ անցել են հայկական քրիստոնեական իրավունքին: Պտուղն ու սաղմը նույնպես որոշակիորեն տարբերակված են հենց Ավեստայում: Եվ արհեստական վիժման ոտնձգության օբյեկտի հարցը ճշգրտելիս անհրաժեշտ է պարզել նաև սաղմի ու պտղի տարբերության հարցը: Ինչքա՞ն ժամանակից հետո է սաղմը սկսել համարվել պտուղ: Աստվածաշնչում դրանց միջև սահմանի հարցը որոշված չէ, իսկ զրադաշտական իրավունքում դա հստակ է: Ըստ Ավեստայի՝ մինչև մեկ ամսեկան գոյացությունը արգանդում դիտվել է սաղմ, դրանցից ավելը՝ պտուղ: Դա հիմնավորվում է Ավեստայի «Վիդենդատ» նասքի 5 ֆրակարդի 45 և դրան հաջորդած ստանսներում (տներում), որոնք նույնությամբ կրկնվում են նույն նասքի 7 ֆրակարդի 60 և դրան հաջորդած ստանսներում: Դրանցում Զորոաստրը ԱհուրՄազդին (Արամազդին) հարցնում է. «Կենդանի արարածների արարիչ, սրբակյաց»: Այս տանը մազդայասնիական կինը հղի կլինի (կարող է լինել) մեկ ամիս կամ երկու ամիս, կամ երեք ամիս, կամ չորս ամիս, կամ հինգ ամիս, կամ վեց ամիս, կամ յոթ ամիս, կամ ութ ամիս, կամ ինն ամիս, կամ տաս ամիս. և եթե այնաման կինը ծննդաբերի մահացած երեխա, ապա այդ դեպքում ի՞նչ պետք է անեն մազդայասնիականները»: Այս հարցից իսկ պարզ է դառնում, որ մոր արգանդում ձևավորված պտուղը՝ սկսած մեկ ամսեկանից, համարվել է երեխա կամ պտուղ, նրա վիժումը կամ հղության արհեստական ընդհատումը, կամ աբորտը՝ անկախ վիժելու («մեռած երեխա ծննդաբերելու») ժամկետից, դիտվել է որպես «մե-

¹⁰ Սմբատ Սպարապետ, Դատաստանագիրք, Երևան, Հայպետիրատ, 1958, էջ 107:

ոած Երեխա ծննդաբերել»¹¹: Քանի որ հաշվարկը սկսվում է մեկ ամսից սկսած, իսկ դրանից հետո վիժելը՝ մեռած (մեռցրած) Երեխա ծնել, ապա դրանից էլ կարելի է ենթադրել, որ մինչև մեկ ամսի գոյություն ունեցող նյութը կամ գոյացությունն էլ դիտվել է «սաղմ», որից էլ բխել են համապատասխան իրավական հետևանքներ: Ահա սաղմի և պտղի այս հասկացությունն էլ անցել է հայկական քրիստոնեական իրավունքին ու օրենսգրքերին: Պետք է նաև նշել, որ ոչ մի նշանակություն չունի այն հանգամանքը, որ այստեղ խոսքը անզգուշաբար կամ վատառողջության պատճառով վիժելու մասին է: Դրանից սաղմի և պտղուի հասկացությունը չի փոխվում:

Այսպիսով, ինչպես իին հայկական գրադաշտական, այնպես էլ քրիստոնեական իրավական սիստեմներում պտղուղը կոչվել է «մանուկ», «Երեխա»՝ դիտվել որպես արդեն գոյություն ունեցող, ապրող մարդ, ինգի ու մարմին, կյանքի իրավունք ունեցող արարած, որպես ոտնձգության մեկ անմիջական և միասնական օբյեկտ, իսկ նրա դեմ ուղղված արարք՝ իր հասարակական վտանգավորությանը հավասարեցվել է արդեն ծնված Երեխայի կյանքի դեմ ուղղված արարքին: Եվ այդ արարքը ուղղված է եղել սաղմի, պտղի և ոչ թե ծննդաբերած կնոջ առողջության դեմ, ինչպես դա Աստվածաշնչում է կամ Յամուրաբիի օրենսգրքի 209-213 հոդվածներում¹², կամ ժամանակակից քրեական օրենսգրքերում:

Բացի նշված անմիջական օբյեկտներից՝ այս արարքներն ունեցել են ավելի ընդհանուր կամ սեռային օբյեկտ: Դա ազգաբնակչության, հասարակության ամբողջականությունն է: Եթե Յին Յունաստանում Երեխաներին սպանում էին կարիքից դրդված, սննդամբերքի պակասության պատճառով, ապա այստեղ նման խնդիր գոյություն չուներ և ամեն կերպ Երեխաների ծնունդը խրախուսվում էր: Իրանն ու Յայաստանը անընդհատ գտնվում էին պատերազմների մեջ և նրանց մշտապես պետք էին զինվորներ, հողագործներ, անասնապահներ, արհեստավորներ և այլն: Ուստի մանկածնությունը գտնվել է պետության պաշտպանության ներքո, իսկ պտղի կամ ծնված Երեխայի դեմ ուղղված ամեն մի արարք դիտվել է ոչ միայն ծննդաբերողի ու ծննդկանի, այլև բուն պետության և հասարակության առողջության ու ամբողջականության դեմ ուղղված արարք: Երեխան, անկախ ծննդյան հանգամանքներից, պետք էր պետությանն ու հասարակությանը: Արորտի կամ ծնված նանուկի սպանության հետևանքով հասարակությունը զրկվում էր իր անդամից, ապագա զինվորից ու մորից, և հետևաբար՝ խախտվում էր նրա ամբողջականությունը: Կնոջ վիժելու կամ Երեխայի սպանության դեպքում տուժում էր պետության, հասարակության, համայնքի, ընտանիքի ամբողջականությունը, որի համար էլ այն գտնվել է պաշտպանության տակ: Դրա համար էլ ամեն կերպ խրախուսվել է բազմակնությունը և մերձամուսնությունը, որի նպատակը շատ Երեխաներ ունենալն էր: Որքան շատ են Երեխաները, ինչքան բազմամարդ է հասարակությունը և շատ է աշխատավորների քանակը, այնքան ուժեղ է պետությունը և առողջ է հասարակությունը: Ամբողջականության

¹¹ Տե՛ս Wolff Fritz. Avesta- Die heiligen Bücher der Parsen, Übersetzt auf der Bartolomae's Altiranischem Wörterbuch. Strassburg, 1910, S. 347, 363.

¹² Տե՛ս Կոդекс Խամմուրապի. В переводе В. А. Яковсона, в частично обработке А. А. Немировского. // Хрестоматия по истории древнего Востока, т.1., М., 1980, с. 152-177.

ապահովման անհրաժեշտության մասին բազմաթիվ հիշատակումներ կան Ավեստայում¹³:

Իրանի թագավոր Յազկերտ Երկրորդը՝ Մեծ Յայաստանի ազգարնակչությանը հավատափոխ անելուն և նորից զրադաշտական դարձնելուն ուղղված 450թ. հրապարակած իր հրամանագրերից մեկում հայերից պահանջում է. «...փոխանակ ընդ կնոջ միոյ՝ բազում կանայս արասցեն. զի աճեցեալ բազմասցին ազգք հայոց: Դստերը հարանց լինիցին, և քորք՝ եղբարց, մարք մի ելցեն յորդոց, այլ և թռուունք ելցեն յանկողինս հաւուց»¹⁴: Եղիշեն և Ղազար Փարպեցին այս թագավորին համարում են հազվագյուտ չարագործ, հայերին ատող մեկը, բայց դա այդպես չէ: Այս հրամանագրում, ինչպես դա ակնհայտ է, առկա է հայոց ազգի աճի մասին հոգածության դրսնորում: Այն ուղղված է հայ ազգի աճն ու ամբողջականությունն ապահովելուն, բխում է զրադաշտական իրավունքից և իրավական է: Դրա մեջ արտացոլված են զրադաշտական օրբողոքսիայի տեսակետից լավագույն իրավական նորմատիվ ցանկություններ, որոնք կազմուն են զրադաշտական կրոնի «Յավատո հանգանակի» և ամուսնաշնոտանեկան իրավունքի հիմքը¹⁵: Դրանք միանգամայն իրավական են, ավելին՝ սահմանադրական են, ամելյունաքարային: Դրանք բոլորովին կամայական, արտառոց և «Էկզոտիկ» չեն, ինչպես թվում է որոշ գրականագետների ու պատմաբանների, թեև այս հանգամանքի վրա նրանք առանձնապես ուշադրություն չեն էլ դարձրել: Ինչ վերաբերում է իրանա-հռոմեական 384/387 թ.թ. կնքած Մեծ Յայաստանի բաժանման մասին պայմանագրին, որով ժամանակին ապահովել էր իրանի բաժին դարձող Մեծ Յայաստանի հայերի դավանանքի ազատության իրավունքը, ապա այս հարցում իրանի թագավորը իր թագավորության սկզբում հասել էր այդ պայմանագրի փոփոխմանը, և այդ տեսակետից ևս նրա այս հրամանագրի հակասության մեջ չէ վերոնշված պայմանագրի հետ¹⁶:

Նույնիսկ նրա այն հրամանագրը, որը դարձավ 451թ. ապստամբության ու պատերազմի անմիջական պատճառը, հայ ժողովորդի նկատմամբ պարունակուն է սեր և հարգանք: Դրանում նա իրավունքի դիրքերից հայ ժողովորդին ցանկանում է այն լավագույնը, ինչ ցանկանում է սեփական ժողովորդի՝ հայերի հավատափոխության պահանջը հիմնավորելով, պատճառաբանելով աստվածների նկատմամբ իր ունեցած պատասխանատվությամբ: Նա ասում է, որ ինքը պարտավոր է իր «իշխանության տակ գտնվողների», այդ թվում և՝ հայերի, «հոգիների փրկության մասին հոգալ», որը չանելու դեպքում իրեն «ծանր պատիժ» է սպասում¹⁷: «Անհավատը», այն է՝ ոչ զրադաշտականը, երկնային թագավորության մեջ չէ վերոնշված պայմանագրի հետ:

¹³ Տե՛ս Ավետա в русских переводах (1861-1996). Составление, общая редакция, примечания и справочники раздел И. В. Рака // Журнал «Нева», «Летний сад», Санкт-Петербург, 1998, էջ 164, 170-171:

¹⁴ Տե՛ս Եղիշե, Վարդանի և հայոց պատերազմի մասին, Երևան, ԵՊՀ հրատ., 1989, էջ 104 (105):

¹⁵ Տե՛ս Ավետա в русских переводах (1861-1996), էջ 156-157, 384-385:

¹⁶ Տե՛ս Խաչատրյան Ս. Ա. Ուказы Ездинерта Второго и его министра Михрнерсеха об отречении армян от христианства и их аксиологический, юридический, логический и социологический анализ. Ереван, 2009.

¹⁷ Տե՛ս Ղազար Փարպեցի, Յայոց պատմություն, Երևան, ԵՊՀ. հրատ., 1982, էջ 98 (99):

թյուն ընկնելու շանս ու հնարավորություն չէր կարող ունենալ և չուներ: Դրա համար էլ նա անկեղծորեն ցանկանում էր հայերին նորից ետ բերել զրադաշտականության, որպեսզի նրանց հնարավորություն ընծերի այնտեղ ընկնելու, և ինքն էլ կարողանա խուսափել պատժից, այն է՝ որպես պարտազանց դժոխք զնալուց: Համեմատության կարգով նշենք, որ եզիպտական փարավոններ, ինչպես որ այդ մասին գրված է Աշխի «Ելք» գրքի 1:18 տաճը, իրեա ազգի նկատմամբ ատելությամբ լցված՝ մանկաբարձ կանանց կարգադրում է ծնունդ ընդունելուց սպանել իրեա կանանցից ծնված արու երեխաներին¹⁸: Այս ամենին ավելացնենք նաև, որ ըստ քրիստոնեական օրթոդոքսիայի չկնքվածը կամ անհավատը, կամ այլահավատը Երկնային Թագավորություն ընկնելու հնարավորություն նույնպես չի կարող ունենալ: Դրա համար Գ. ԼուսաՎորիչը ժամանակին կանոն է ընդունել և պատիժ սահմանել այն անձանց համար, որոնց մեղքով երեխան անկնունք է մահացել¹⁹:

2. Պարզաբաննան ենթակա հաջորդ խնդիրը այս արարքը կատարող սուբյեկտի հարցն է: «Հաճախապատում ճառքում» արհեստական վիժումի կամ վիժեցման սուբյեկտը նախ երեխայի մայրն է՝ լինի նա պոռնիկ, շնացող, թե օրինական ամուսնության մեջ գտնվող կին կամ աղջիկ, որի մոտ եկել է տղամարդը՝ «անվանիներից կամ էլ ոչ անվանիներից» (15 ֆրակարդի 9 ստանս) : Այդպես է նաև Ավեստայում, «Արտա Վիրապ նամակում» և դրանից էլ անցել է «Հաճախապատում ճառքին»: Իսկ Աստվածաշնչում դրա սուբյեկտը ոչ թե պտուղը կրողը, այլ իրար հետ կռվող տղամարդիկ են: Ժամանակակից քրեական օրենսգրքերուն դրա սուբյեկտը աբորտ անող բժիշկը կամ բժշկական կրթությունից գուրկ ամեն որ է: Այդ օրենսգրքերում նախատեսված հոդվածներում առկա են արարքի կատարման մի քանի պայմաններ ևս: Աքրորդը կամ արհեստական վիժումը կարող է տեղի ունենալ միայն կնոջ համաձայնությամբ, իսկ կնոջ առողջությանը հասցրած վնասը կամ նրա մահը կարող է վրա հասնել միայն անզգուշության հետևանքով: Կան նաև պայմաններ, որոնք վերաբերում են պտղի հասունացման ժամկետներին:

Ավեստայում արհեստական վիժումի կամ աբորտի սուբյեկտը նույնպես պտուղը կրող կինն է, ինչպես որ է «Հաճախապատում ճառքում»: Նրա հետ հանցագործության մասնակիցներ կարող են դիտվել նաև աբորտ կատարելուն հարկադրող, կազմակերպող, օժանդակող կամ դրդող, Վրեժի, խանդի կամ շահադիտական նկրտումներով աբորտին հետամուտ որևէ անձ՝ «պառավ», երեխայի հայրը, որոշ դեպքերում նույնիսկ՝ «աղջկա հայրը», ինչ մասին նշում կա Ավեստայի 7 ֆրակարդի 13-14 ստանսներում: Այն կարող է տեղի ունենալ նաև անզգուշաբար, պտուղը կրողի կամ մեկ այլ անձի անզգույշ արարքի հետևանքով (ինչպես որ է Աստվածաշնչի նշված տներում՝ կռվող տղամարդկանց կողմից), և ամեն անգամ դա առաջացնում է զնահատականի, այդ թվում՝ սանկցիայի, պատժի անհրաժեշտություն:

Խառարան C. A. Սկզբանական պատճենաբանությունը և արարքի սուբյեկտը նույնպես պտուղը կրող կինն է, ինչպես որ է «Հաճախապատում ճառքում»:

¹⁸ Տե՛ս Աստվածաշնչում, Մայր Արոռ Ս. Էջմիածին, 1994, էջ 64:

¹⁹ Տե՛ս Կանոն սրբոյն Գրիգոր Պարթեւի, դարձեալ հարցումն եւ պատասխական կանոնը սրբ. Գրիգորի, Գլուխ Լ. Կանոնը սրբ. Գրիգորի, առաքելոյ հայոց // Մատենագիրը հայոց, Ա հատոր, Անթիլիաս-Լիբանան, 2003, էջ 141-147:

«Հաճախապատում ճառքի» «Ը» ճարի 25 տանը կամ որևէ այլ տան մեջ բացակայում է անզգուշաբար կամ կնոջ կողմից ինքնաբերաբար, կամ անառողջ վիճակի հետևանքով առաջացած վիժման կամ երեխայի հասունացման հանր սահմանված ժամկետն անցնելուց հետո մեռած երեխա ծննդաբերելու մասին միտք: Այնտեղ բացակայում է նաև օրինական ամուսնության մեջ գտնվող կնոջ կողմից դիտավորյալ կամ անզգուշաբար կատարվող վիժումը դատապարտող նորմ: Բայց քանի որ Ավեստայում ոչ միայն արհեստական վիժումը, այլ նաև անզգույշ վիժումը կամ մեռած երեխա ծննդաբերելն է համարվել պտուղը կրող կնոջ կողմից մեղավորությանը կատարված, իրավունքի կամ բարոյականության նորմերով արգելված արարք, ապա կարելի է կարծել, որ նման վերաբերմունքն էլ այդ արարքներին անցած է եղել նաև հայկական քրիստոնեական իրավունքին: Ավեստայի «Վիդադատ» նասքի արդեն հիշատակված 5 ֆրակարդի 45-58, ինչպես նաև 7 ֆրակարդի 60-72 ստանսմերում, որոնց մասին այստեղ արդեն հիշատակվել է, խոսվում է 1-10 ամսվա ժամանակահատվածում «մեռած երեխա» ծնելու անթույլատրելիության մասին: Ընդհանրապես «մեռած երեխա» ծնել կարելի է միայն նորմալ հիդության ժամկետներն անցնելուց հետո, բայց քանի որ այստեղ խոսվում է նաև 1-ից 10 ամիս ժամկետի ամենավաղ փուլերում «մեռած երեխա ծնելու» մասին, ապա հասկանալի է, որ խոսքն այստեղ, նախ և առաջ, պտուղը վիժելու մասին է: Բայց արդյո՞ք այստեղ ամեն տեսակի աբորտ՝ անզգույշ կամ դիտավորյալ, կամ ծննդաբերության նորմալ ժամկետի վրա հասնելուց հետո մեռած երեխայի ծննդաբերելն է համարվում անթույլատրելի՝ պարզ չե՞:

Կոնկրետացված չէ նաև արարքի սուբյեկտ հանդիսացող կնոջ կարգավիճակը, նշում չկա այն մասին, թե խոսքն այստեղ պոռնկությամբ կամ շնությամբ գրադվող, թե օրինական ամուսնության մեջ գտնվող կնոջ մասին է: Բայց քանի որ Ավեստայում կա մեկ այլ ֆրակարդ՝ 15-ը, որը կոչվում է «Յինգ մեղքեր» և նվիրված է ոչ օրինական ամուսնության մեջ գտնվող կնոջ «ապօրինի հիդությանը» և արհեստական աբորտին, ապա կարելի է կարծել, որ 5 և 7 ֆրակարդներում արգելված է համարվել օրինական կարգով ամուսնացած կնոջ կողմից կատարվող ինչպես արհեստական աբորտը, այնպես էլ ինքնաբերաբար կամ անզգուշորեն կատարվող հիդության ընդհատումը և մեռած երեխա ծննդաբերելը²⁰: Իսկ փաստը, որ տվյալ ֆրակարդում մեկ ամսից մինչև տաս ամսվա ժամանակահատվածում պտղի ամեն մի դուրս նետում, այն է՝ վիժում, դիտվում է «մեռած երեխա» ծնել, և հասարակական վտանգավորության տեսակետից այստեղ իրարից չեն տարբերակվում ինքնաբերաբար կամ անզգուշորեն վիժելը, դիտավորյալ աբորտ կատարելը և մեռած երեխա ծննդաբերելը, ապա դա պատահական չէ: Դա արվել է, որպեսզի հոյն կինը իր նկատմամբ, ինչպես նաև ընտանիքի, համայնքի անդամները նրա նկատմամբ, հիդության ընթացքում հատուկ խնամք ցուցաբերեն:

Վիժում կատարած կնոջ նկատմամբ սահմանված է եղել մաքրագործման երեքօրյա ժամկետ: Նա այդ ընթացքում պետք է գտնվեր ցանկապատված մի այնպիսի վայրում, որտեղ հողը չոր է: Դրա մոտով չպետք է անցներ «...անասում՝

²⁰ St'u Wolff Fritz. Avesta- Die heiligen Bücher der Parsen, übersetzt auf der Bartolomae's Altiranischem Wörterbuch. Strassburg, 1910, S. 347, 363.

փոքր եղերավոր կամ մեծ, Ահուր-Մազդի կրակ և բարսում»: Ըստ այս 7 ֆրակարդի 63 ստանսի (տաճ) սահմանած կանոնի, նման կինը նաև պետք է լիներ հեռու «երեսուն քայլ՝ կրակից, երեսուն քայլ՝ ջրից, երեսուն քայլ՝ պարզած բարսումից, երեսուն քայլ՝ սրբակյաց մարդկանցից»: Ըստ 64 ստանսի պահանջի՝ մեկուսացված կմոջը պետք է տրվեր ուտելիք և հագուստ: Համաձայն 66 տաճ, առաջին կերակուրը, որը պետք է ուտեր նման կինը, որ մոխիրն էր՝ ցի մեզի հետ: Հաջորդ տներից պարզվում է, որ դրանից հետո նա կարող էր այնտեղ ուտել նաև այլ կերակուրներ և խմել կաթ ու գինի: Երեք գիշեր նման վայրում անցկացնելուց, ինը փոսերի վրա մարմինը մեզով և ջրով լվանալուց հետո, կինը հանարվել է մաքրագործված: Բայց դա չի նշանակում, թե նման կինը ազատվել է պատասխանատվությունից: Այդ նույն ֆրակարդի 71 և 72 ստանսներում խոսվում է «մեռած երեխա» ծնելու (նաև՝ վիժելու) համար քավության տեսակը և չափը սահմանելու մասին: Այնտեղ ասված է. «Թող դրա համար կոչված ռատը²¹, հլությունը կատարելուն կոչվածը որոշեն քավության հարցը»: «Քավության» տակ հասկացվում է որևէ պատժատեսակ, որն այստեղ «ձիու մտրակով երկու հարյուր հարվածն է՝ հլության հակող»: Դա բավականին խիստ պատիժ է: Իսկ այս ամենը նշանակում է, որ բոլոր դեպքերում վիժելու բոլոր տեսակները եղել են արգելված և այս բոլոր միջոցները, այդ բվում՝ պատժի, ուղղված են հիդ կնոջ առողջությունը պահպանելուն: Եվ նորից այստեղ արարքի սուրբեկուն է դիտվում միայն պտուղը կրող կինը: Բայց, միաժամանակ, կնոջ նկատմանը նման հոգածությունը հերթական ապացույց է այն բանի, որ այստեղ խոսքը օրինական ամուսնության մեջ գտնվող կնոջ մասին է:

Ի տարբերություն Ավեստայի «Վիդեսատ» նասքի (հայերեն՝ «ասք») 5 ֆրակարդի 45-58 և 7 ֆրակարդի 60-72 ստանսների, նույն նասքի «Յինգ մեղքեր» կոչվող 15 ֆրակարդի 9-19 ստանսները արդեն որոշակիորեն նվիրված են «Ապօրինի հիդությանը», և դրանց կապը գ. Լուսավորչի «Ը» ճարի 25 տաճ հետ ավելի ակնհայտ է: Այնտեղ արարքի սուրբեկությունը, այն է՝ «ապօրինի հիդությունը» արհեստականորեն ընդհատողը, դեռևս չամուսնացած աղջիկն է, իսկ հիդությունը ընդհատելու ձևերն էլ գրեթե նույնն են: Այդ ֆրակարդի 9 ստանսում ասված է. «Եթե տղամարդը գա ռատի (համայնքի – Ս. Խ.) խնամքի տակ գտնվող կամ չգտնվող աղջկա մոտ՝ անվանիներից կամ էլ ոչ անվանիներից և նա հղիանա, ապա թող այդ աղջիկը մարդկանց առջև զգացած ամոթից չառաջացնի գոյացության արտանետում (վիժում – Ս. Խ.)՝ ջրի և բույսերի միջոցով»: Նույնի 10 ստանսում էլ ասված է, որ աղջիկը «...նման արարքի համար պատասխանատու կլինի»: Յասկանալի է, որ տվյալ դեպքում խոսքը պոռնիկ կամ շնացող կնոջ մասին չէ, բայց բոլոր դեպքերում այս կարգի աղջիկը նույնպես ճանաչվել է ապօրինի արորտի կատարման սուրբեկությունում և հավասարեցվել է նրանց: Ինչպես նկատում ենք, աղջկա պատժի կոնկրետ տեսակի մասին չի հիշատակվում, բայց եթե հաշվի առնենք վերոնշված ֆրակարդի 71 և 72 գլուխներում նախատեսված պատիժը մեռած երեխա ծննդաբերելու համար, որը վերաբերվում է օրինական ամուսնության մեջ գտնվող կնոջ կողմից կատարված վիժելուն կամ մեռած երե-

²¹ «Ուստ» բառը Եղիշեի գորի ծանրագործությունները կազմողները և բարգմանիները թարգմանել են որպես «Գլխավոր»: Տե՛ս Եղիշե, Վարդանի և հայոց պատերազմի մասին, Երևան, ԵՊՀ հրատ., 1989, էջ 435:

խա ծննդաբերելուն, ինչպես նաև «Արտա Վիրապ նամակի» 44 և 94 գլուխները, ապա կարելի է ասել, որ 9 ստանսում նկարագրվածի համար հավանական պատիժը եղել է «հյության հակող» ձիու նտրակի մի քանի հարյուր հարվածաշարը կամ նույնիսկ՝ մահապատիժը, իսկ հանդերձյալ կյանքում նրանց տեղը որոշված է եղել, այն է՝ դժոխքը:

Նույն ֆրակարդի 11 ստանսում կրկին նման կերպ «սայթաքած» աղջկանից պահանջվում է ամորից դրդված «պտուղը չսպանել»: 12 ստանսում էլ «պտողը գիտակցարար վնասելու» կամ «պտուղը գիտակցարար սպանելու համար» պատասխանատու և «պատժի ենթակա» է հայտարարվում աղջկա հայրը (գուցե այստեղ «հայր» ասելով նկատի է ունեցվել պտղի ենթադրվող հայրը, բայց նման անձը այս ֆրակարդում ամենուր տղանարդ է կոչվում, բացի այս մի դեպքից): Նույն ֆրակարդի 13-14 ստանսներում էլ ասված է. «Եթե տղամարդը գա աղջկա նոտ... և նա հղիանա, և եթե աղջիկն ասի. «Երեխան սարքել է այդ տղամարդը», իսկ տղամարդն էլ ասի նրան. «Գնա պառավի մոտ, խնդրիր, որպեսզի նա վիժում առաջացնի: Եվ եթե այդ աղջիկը պառավից խնդրի վիժում առաջացնել, պառավն էլ բերի բանգ կամ շատ կամ գնան կամ ցանկացած հյութ՝ բույսերից և կործանի երեխային, ապա դրանից հետո աղջիկը, որը կործանել է երեխային (իսկ վիժած պտուղը, ինչպես տեսնում ենք, դիտվում էր երեխա, մարդ), տղամարդու և պառավի հետ միասին դիտվում են այդ արարքը կատարող»: Նույնի 15-19 ստանսներում էլ երեխայի հոր վրա պարտականություն է դրվում պահել և խնամել երեխայի մորը՝ անկախ նրա դասային ծագումից, հետո էլ՝ երեխային: Եթե երեխան՝ մնալով առանց պատշաճ հսկողության և պաշտպանության, գրիվում էր, ապա երեխային մահ պատճառողը դիտվում էր նրա հայրը և պատժի ենթարկվում դրա համար (ստանս 16): Եթե այս կամ այն պատճառով հայրը չի ստանձնել երեխայի խնամքը, ապա նրա խնամքը պետք է ստանձներ և ստանձնել է համայնքը²²:

Այն, որ զրադաշտական իրավունքով աբորտ անելու միջոցով պտուղը վերացնելու սուրբեկտ է ճանաչված եղել պտուղը կրող կինը, իհմնավորվում է նաև «Արտա Վիրապ նամակի» 64 գլխով: Այնտեղ նկարագրված է, թե ինչպես Արտա Վիրապը դժոխքում շրջագայելիս տեսել է այնտեղ տառապող մի կնոջ հոգու, որը «անզգամարար հղիացել էր ուրիշ մարդկանցից և իր երեխային փչացրել»²³:

3. Սուրբեկտիվ կողմից աբորտը կամ արհեստական վիժումը, կամ նորածին երեխայի սպանությունը, ըստ «Յաճախապատում ճառքի» «Ը» ճառի 25 տանը նախատեսված նորմի, կատարվել է ուղղակի դիտավորությամբ: Սաղմը կամ պտուղը վիժող կամ երեխային սպանող կինը գիտակցել է իր արարքի հասարակական վտանգավորությունը, նախատեսել վտանգավոր հետևանքների վրա հասնելը և ցանկացել դրանք: Բայց, ինչպես արդեն ասվել է, անզգույշ վիժումն էլ, որի մասին «Յաճախապատում ճառքում» խոսք չկա, զրադաշտական և հին հայկական քրիստոնեական իրավունքում դիտվել է հանրորեն վտանգավոր արարք՝ հանցագործություն կամ բարոյական խախտում, և դրա կատարողը են-

²² Տե՛ս *Wolff Fritz*. Avesta- Die heiligen Bücher der Parseen, übersetzt auf der Bartolomeas Altiranischem Wörterbuch. Strassburg, 1910. S. 409-410.

²³ Տե՛ս Արտա Վիրապ նամակ: Յուշտի Ֆրիհան, Պահլավերեն բնագրից թարգմանեց և ծանոթագրեց պրոֆ. Լ. Թ. Արդահամյան, ՀՍՍՌ ԳԱ հրատ., Երևան, 1958, էջ 91:

թարկվել է քրեական պատժի կամ բարոյական տույժի:

4. Օբյեկտիվ կողմից վիճելը կամ արհեստական աբորտը կատարվում է գործողության՝ որովայն ճնշելու, դեղերի միջոցով պատուի «օրովայնում ապականելու» միջոցով: Այդ տեսակետից այս նորմը լիովին համահումն է «Արտա Վիրապ նամակի» 64 տաճը առկա նորմի հետ: Ինչ վերաբերում է արդեն ծնված երեխային սպանելուն, որի պատճառները կարող են բազմազան լինել, ապա դրա եղանակի մասին, ինչպես որ է արհեստական վիժնան ժամանակ, ոչինչ ասված չէ: Դրանից կարելի է եզրակացնել, որ այն կարող էր կատարվել և գործողության՝ խեղինելու, թունավորելու կամ այլ որևէ եղանակով, և անգործության միջոցով: Անգործությամբ սպանելու դասական օրինակը առկա է «Արտա Վիրապ նամակի» 94 գլխում, որտեղ, դժոխքում շրջագայող Արտա Վիրապի հարցին ի պատասխան Սրոշ առաքինին՝ մի փոսում տառապող կանանց հասցեին ասում է. «Սրանք այն կանանց հոգիներն են, որոնք իրենց երեխային կաթ չեն տվել, նիհարացրել են և ոչնչացրել...»: Դրա 78 տաճն էլ, դժոխքի սառցափոսերից մեկում տառապառ կնոջ հոգու մասին ասված է, որ դա «այն չարագործ կնոջ հոգին է, որը երկրի վրա հղիացել է ոչ թե իր ամուսնուց, այլ օտար մարդուց, և ասում էր, որ չի հղիացել, մինչդեռ նա ոչնչացրել էր իր երեխային»: Նույնի 64 տաճն էլ, դժոխքի սառցափոսերից մեկում տառապառ կնոջ հոգու մասին ասված է. «Սա այն չարագործ կնոջ հոգին է, որը անզգամաբար ուրիշ մարդկանցից հղիացավ և իր երեխային փչացրեց...»²⁴: Վերջին դեպքում խոսքը արհեստական աբորտի կամ պտուղն «սպանելու» մասին է:

Ինչ վերաբերում է կենդանի ծնված և մինչև ծննդը հասունացման բոլոր փուլերն անցած երեխայի սպանությանը, որն առկա է «Հաճախապատում ճառքի» «Ը» ճարի 25 տաճը, ապա այստեղ խոսքն իսկապես ոչ թե մանկասպանության մասին է ընդհանրապես, այլ նորածին երեխայի սպանության, ընդ որում այնպիսի երեխայի, որը եղել է պոռնկության կամ շնության (ամուսնական դավաճանության) արդյունք, իսկ սպանությունը կատարվում է պոռնկության կամ շնության փաստերը և դրանց արդյունքները թաքցնելու համար: Բայց այս ամենը չի նշանակում, որ հոգեբանական բարդ իրավիճակում գտնվող օրինական ամուսնության մեջ գտնվող կնոջ կամ սոցիալական, կամ այլ որևէ դրդումով կատարված մանկան սպանությունը հանցագործություն չի դիտվել: Դիտվել է, և այն էլ՝ ծանր հանցագործություն, և դա բխում է ոչ միայն այս տաճը ծնակերպած նորմի տրամաբանությունից: Մանուկների մասին առկա հոգածության բազմաթիվ փաստեր կամ «Հաճախապատում ճառքում», որոնք վկայում են այն մասին, որ Գր. Լուսավորիչը ծանր հանցագործություն է համարել ամեն մեկի կողմից կատարած մանկասպանությունը՝ մանուկի կյանքը համարելով հատուկ պաշտպանության օբյեկտ:

Զրադաշտական իրավունքով էլ նորածին սպանությունը դիտվել է ծանր հանցագործություն: «Արտա Վիրապ նամակի» 44 տաճը նկարագրված է, թե ինչպես Արտա Վիրապը դժոխքում շրջագայելիս՝ տեսնում է այնտեղ տառապող մի կնոջ հոգու: Նրա հարցին, թե ինչու է նա տառապում՝ նրան ուղեկցող աստվածները պատասխանում են, որ «այդ չարագործ կինը երկրի վրա իր սեփական զավա-

²⁴Տե՛ս Արտա Վիրապ նամակ, էջ 91, 100, 109:

կին ոչնչացրել և դիակը դեն է շպրտել»: Նույնի 78 գլխում էլ Արտա Վիրապը տեսնում է դժոխքի սառցափոսերից մեկում տառապող կանանց հոգիների, որոնք «իրենց երեխաներին կաթ չեն տվել, նիհարացրել են և ոչնչացրել»: Նույնպիսի եղանակներով մանկասպանություն է նկարագրված «Արտա Վիրապ նամակի» 94 գլխում²⁵:

«Յաճախապատում ճառքի» «Ը» ճարի 25 տանը նախատեսված մանկասպանության օբյեկտը նոր ծնված երեխան է, սուբյեկտը՝ ծննդաբերող պոռնիկ կամ շնացող կինը, ինչպես որ է «Արտա Վիրապ նամակի» 44 տանը: Արարքը կատարվում է ուղղակի դիտավորությամբ: Իսկ օբյեկտիվ կողմից այն կարող էր կատարվել ինչպես անգործությամբ՝ կարով չկերակրելով, նիհարացնելով, ինչպես որ է «Արտա Վիրապ նամակի» 94 գլխում, այնպես էլ գործողությամբ՝ խեղդելու կամ մեկ այլ միջոցով ու եղանակով:

Բուն Աստվածաշնչում ուղղակի նորմեր կամ ցուցումներ աբորտի կամ արհեստական վիժում առաջացնելու արգելված լինելու մասին՝ չկան, բայց նրա դրույթներից դա ենթադրվում է: Դրա փոխարեն կան դրա մասին ասույթներ, որոնցում «վիժում» բառն օգտագործվում է քանակական հմաստով: «Ժողովող» գրքի 6 գլխի տաճ համաձայն՝ այն մարդը, ով ունի ունեցվածք, հարստություն, բայց ուտելու հնար չունի, և «եթէ նրա հոգին չի կշտացել բարիքներից», ապա «վիժածն աւելի լաւ է նրանից»: Վիժվածքի մասին նման դատողություններ կան նաև Հոբի գրքի 3:13 և 21 տեսքում, որոնք որևէ նշանակություն չունեն աբորտի արգելված լինելու մասին նորմի քննարկման համար:

Բայց դրա ուղղակի արգելված լինելու մասին նորմեր կան քրիստոնեական կրոնաիրավական որոշ հուշարձաններում, օրինակ՝ «Ղիդախնեում»: Այն պարունակում է արհեստական վիժումն ու նորածնի սպանությունը արգելող ուղղակի պահանջներ: «Ղիդախնեի» 2 գլխի 2 կետում ասված է: «...Մի մեռցորու երեխային սաղմի մեջ, ծնվածին մի սպանիր...»: Սակայն այնոք է ասել, որ «Ղիդախնեի» ծագման ժամանակի և հեղինակի (հեղինակների) հարցը մինչև այժմ էլ վիճարկվում է: Արդյո՞ք այն գրված է 1-ին դարում, առաքյալների կողմից, ինչպես անդում են ոմանք, թե 2-ում կամ ավելի ուշ ժամանակ, նրանց հետևորդների կողմից՝ մինչև այժմ այդպես էլ պարզ չէ: Յամենայնդեպս, արդեն ապացուցված է համարվում այն հանգամանքը, որ դա գրված չէ առաջին դարում, հետևաբար՝ առաքելական չէ: Իսկ նոր ժամանակներ է այն հասել 11 դարում կազմված մի ձեռագրի միջոցով²⁶:

Բոլոր դեպքերում աբորտի ու նորածնի սպանության մասին ինչպես Աստվածաշնչում, այնպես էլ «Ղիդախնեում» ձևակերպված նորմը ձևի ու բովանդակության տեսակետից «Յաճախապատում ճառքի» մեջ տեղ գտած աբորտի մասին նորմի հետ գրեթե կապ չունի: Վերջինս ունի յուրահատուկ ձև, արտահայտչամիջոցներ ու կառուցվածք, որի մասին արդեն ասվել է: Այդ արարքը իր օբյեկտով, սուրբյեկտով, օբյեկտիվ ու սուբյեկտիվ կողմերով նման է գրադաշտական վերոնշված նորմերին: Գր. Լուսավորիչը հիշատակում է «որովայնը ճնշելու», «դե-

²⁵ Տե՛ս Արտա Վիրապ նամակ, էջ 80, 100, 109:

²⁶ Տե՛ս *Виттер Р. Ю.* Возникновение христианской литературы, М.-Л., 1946, էջ 53–78; *Նույնի*՝ Учение Двенадцати апостолов, ЖМП, 1975, N 11:

ղերով որովայնը ապականելու» և վիժում առաջացնելու մասին, իսկ Ավեստայի համապատասխան ֆրակարդում էլ նորից հղում է արվում ղեղերով՝ «բանգ կամ շաէտ կամ գնան կամ ցանկացած հյութ բույսերից», կնոջը տալու և այդ միջոցով «Երեխային կործանելու» մասին: «Արտա Վիրապ նամակի» գլուխների մեջ նկարագրվածների հետ էլ «Հաճախապատումի» այս տաճ մեջ նկարագրված այս արարքն ունի զուգահեռներ, որն ակնհայտ է դառնում տարրական համեմատությամբ: Այդ ամենը վկայում է, որ «Հաճախապատումի» այս նորմը իսկապես աստվածաշնչյան չէ, այլ՝ ազգային, իին հայկական, զրադաշտական-ավեստական և գուցե նաև, ավելի հին՝ զրադաշտությանը փոխանցված Հայկացյան քաղաքակրթությունից: Հիշենք, որ Հայկ նահապետը Բաբելոնից Հայաստան Եկավ սակավաթիվ մարդկանցով և այնտեղ էլ շատ մարդիկ չգտավ: Եվ բնական է, որ նաման ժողովրդագրական իրադրության պայմաններում պետք է որ արդրտն արգելվեր: Ինքը՝ Հայկը, բազմազավակ էր և ուներ բազմանդամ ընտանիք²⁷:

Այս նորմերի միջև առկա զուգահեռները ևս ապացույցներ են այն բանի, որ Գր. Լուսավորիչը խնդիր է ունեցել հաշտեցնել, համաձայնության եզրեր գտնել զրադաշտական օարգացած և նոր ստեղծվող քրիստոնեական իրավական սիստեմների միջև, ստեղծել քրիստոնեական օրենսդրություն պիտանի նոր քրիստոնեական պետության կողմից գործածելու համար: Նման օրենսդրություն աշխարհում առաջին անգամ ստեղծել է հենց նա և ուրիշ ոչ ոք: Մի բան, որը առայժմ չկար, բայց որը պատշաճ էր ստեղծել: Քանզի այն իրավական նորմերի շարքերը, որոնք մինչ այդ օգտագործվում էին քրիստոնեական անլեզալ և կիսալեզալ սեկտաներում կամ Եկեղեցական համայնքներում, այդ բվում՝ այնպիսիներում, ինչպիսիք էին Ալեքսանդրիայինը, Անտիոքինը կամ մեկ ուրիշը, որոնց միակ աղբյուրը Նոր Կտակարանն էր, ի վիճակի չին ինքնին դառնալ պետական քրիստոնեական իրավական սիստեմ և ծառայել Հայաստանում նոր առաջացած բացարիկ քրիստոնեական պետությանը: Առանց օրենսդրության՝ իրավական սիստեմը թերզարգացած սիստեմ է, իսկ նման պետություն և օրենսդրություն աշխարհում առաջին անգամ ստեղծել և քրիստոնեական իրավական սիստեմը ամբողջական ու կենսունակ է դարձել Գր. Լուսավորիչը: Եվ դա նա արել է զրադաշտական և քրիստոնեական իրավունքի սինթեզման հիմքի վրա՝ ապահովելով հայ ժողովրդի երկու իրավական սիստեմների բնական կապը, շարունակականությունը և ծառանգականությունը, ապահովելու ադապտիվության, տրանզիտության և այլ հատկությունների հիմքի վրա: Դրանով նա ապահովել է նոր՝ քրիստոնեական քաղաքակրթության առաջացման երկրորդ՝ պետական փուլի առաջ գալը Հայաստանում, որտեղից էլ սկսվել է դրա արտահանումը դեպի Հռոմեական կայսրություն, տարածումը դեպի Եվրոպա և ավելի հեռու: Դա նրա կողմից արվել է հնարավոր շատ զրադաշտական նորմեր ներմուծելով և ներդնելով նոր ստեղծվող քրիստոնեական իրավական սիստեմի մեջ, որի վկայությունն է «Հաճախապատում ճառքը», դրա պարունակած այս նորմը:

²⁷Տե՛ս **Սովոր Խորենացի**, Հայոց պատմություն, Երևան, ԵՊՀ հրատ., 1981, էջ 39-53:

**ПРОБЛЕМА ВЫКИДЫША И УБИЙСТВА НОВОРОЖДЕННОГО РЕБЕНКА
В "ЧАСТОПОВТОРЯЕМЫХ РЕЧАХ"**

C. A. ХАЧАТРИЯН

В статье доказывается, что норма об искусственном выкидыше и убийстве новорожденного ребенка, напечатанная место в "Частоповторяемых речах", а затем и в других источниках познания древнеармянского права, по сути, взята не из Библии. Этую норму, как и многие другие, Григор Просветитель привнес в армянское христианское право из зороастрийского права, тем самым обеспечив связь и преемственность двух армянских правовых систем и цивилизаций.

THE ISSUE OF MISCARRIAGE AND KILLING OF A NEW-BORN IN "SPEECHES"

S. A. KHACHATRYAN

It is proved in the article that in "Speeches" the prohibiting norm about miscarriage by applying artificial means or killing of a new-born is essentially not Biblical. Gregory the Illuminator borrowed that and many other norms from the Zoroastrian Law and inserted them into the Christian Law which led to the continuation of civilizations and the hereditary relation of the Armenian Zoroastrian and Christian Law systems.

**ՔԱՐՉ ՏԱԼԸ ՈՐՊԵՍ ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ,
ԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ԲԱՑԱՐԱՅՏՄԱՆ, ԿԱՍԽՄԱՆ
ՈՒ ՆԱԽԱԿԱՆԽՄԱՆ ՄԻՋՈՑ ԵՎ ՊԱՏԺԱՏԵՍՎԿ**

Ս. Ա. ԽԱՉԱՏՐՅԱՆ
Իրավագիտության թեկնածու, դոցենտ,
գՊՀ դասախոս

Քարշ տալը կամ քարշելը որպես հանցագործությունների ու խախտումների բացահայտման մեթոդ, միջոց և պատժատեսակ՝ գոյություն է ունեցել միայն զրադաշտական իրավունքում, որից էլ անցել է հայկական քրիստոնեական իրավունքին: Սակայն դրա՝ որպես զրադաշտական դելիկտային իրավունքի դրսկորման նախին որևէ անդրադարձ չկա ավեստագիտական կամ իրավագիտական գրականության մեջ: Անգամ Ա. Փերիխանյանը, որն իր «Իրանի հասարակությունը և իրավունքը Պարթևական և Սասանյան փուլերում» աշխատության մեջ զրադաշտական դելիկտային իրավունքին նվիրել է հատուկ բաժին, ընդհանրապես ուշադրություն չի դարձնում ոչ քարշելուն, ոչ կապելուն, ոչ էլ հին հայկական պատմական աղբյուրներում արտացոլված այլ զրադաշտական պատժատեսակներին ու ներգործության ձևերին¹: Քարշելը սխալ է թարգմանված «Զայռուսերեն բառարանում»²:

¹Տե՛ս *Персикания А. Г.* Овьество и право Ирана в парфянский и сасанидский периоды. М., 1983, էջ 247-262:

²Տե՛ս Հայ-ռուսերեն բառարան, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1987, էջ 705, 709: